The U.S. Embassy in Armenia

# Առաջնորդություն և բրենդավորում

## Առաջնորդելու (և հաջողելու) ուժը

*Քաղաքացիական հասարակության երիտասարդ գործիչների համար*

Դասընթացավար՝ **ՆԵՆՍԻ ԲՈՔՍԿՈՐ** (ԱՄՆ)

## 8 ապրիլի, 2018թ. ժամը 9:30-ից 17:00

**Աշխատաժողովի ժամերը՝ 9:30-12:50 և 14:30-17:00**

Առաջնորդման հարցերին նվիրված այս ինտերակտիվ աշխատաժողովի ընթացքում, որտեղ ներկայացված գործիքներն ու նոր գիտելիքները ամրապնդվելու են գործնական դերախաղային աշխատանքների միջոցով, դուք կբացահայտեք հետևյալը.

- ինչպես նախապատրաստել հիմքեր առաջնորդման հմտությունների համար,
- ինչպես մշակել քո ուրույն անձնական բրենդը,
- ինչպես առաջնորդել, անգամ եթե դա չի բխում ի պաշտոնե,
- ինչպես զարգացնել հանրային առաջնորդման հմտությունները
- ինչպես փոփոխությունների հասնել քո համայնքում, քո շրջապատում:

## Տեղերը սահմանափակ են:

## Դիմումներն ընդունվում են մինչև ա.թ. ապրիլի 4-ը հետևյալ հղմամբ՝ https://goo.gl/tnDBzx

**Աշխատաժողովի աշխատանքային լեզուն անգլերենն է, ապահովվում է հայերեն թարգմանություն: Միջոցառման անցկացման վայրի մասին ընտրված մասնակիցներին կտեղեկացնենք ապրիլի 5-ին: Մասնակցությունն անվճար է:**



***Նենսի Բոքսկորը*** կիրառական ժողովրդավարության միջազգայնորեն ճանաչված փորձագետ է: Նենսին ԱՄՆ բոլոր 50 նահանգներում և աշխարհի ավելի քան 20 երկրներում աշխատել է բազմաթիվ առաջնորդող դիրքեր զբաղեցնող անձանց հետ ՝ սկսած ուսանողներից, ակտիվիստներից, շահույթ չհետապնդող կազմակերպություններից մինչև տեղի ու օտարերկրյա պետական պաշտոնյաներ: Նա ուսուցանում է հռետորական ու պրեզենտացիոն, ֆինանսական միջոցների հայթայթման, քաղաքացիական լայն զանգվածներին ուղղված շահապաշտպան գործունեության և քաղաքացիական առաջնորդման հմտություններ: Որպես ֆոնդհայթայթման փորձագետ՝ Նենսին վարել է մի շարք նշանակալի արշավներ և 1999թ. ի վեր ունի իր սեփական խորհրդատվական ընկերությունը: